Հաստատում եմ
Հայաստանի պատմության թանգարանի
տնօրեն Գ. Պողոսյան
24.10.2023թ.

ԿԱՐԾԻՔ

Արտակ Սուրիկի Խաչատրյան

«ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը և ղարաբաղյան հակամարտությունը. ազգաբանական ուսումնասիրություն»

Վերնագրով թեկնածուական ատենախոսության մասին

Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն պատմության և Ազգագրության բաժինների 2023թ հոկտեմբերի 20-ի ընդլայնված նիստում քննարկվեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ Արտակ Սուրիկի Խաչատրյանի՝ «ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը և ղարաբաղյան հակամարտությունը. ազգաբանական ուսումնասիրություն» վերնագրով ատենախոսական աշխատանքը՝ «Ազգագրություն» մասնագիտության պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմամբ:

Նիստին մասնակցում էին թանգարանի գիտական գծով փոխտնօրեն Ն. Երանյանը, Նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ Ս. Գալստյանը, բաժնի գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Հ. Նազարյանը, պ.գ.թ. Միհր Հարությունյանը, Մ. Պետրոսյանը, Ազգագրության բաժնի վարիչ՝ Արտակ Ասատրյանը, և պ.գ.թ. Լիլիա Ավանեսյանը:

Ելույթ ունեցան Նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ Ս. Գալստյանը, պ.գ.թ. Միհր Հարությունյանը, Ազգագրության բաժնի վարիչ՝ Արտակ Ասատրյանը

Նիստի մասնակիցները արձանագրեցին հետևյալը.

Ատենախոսությունը նվիրված է ԽՍՀՄ-ի վարած ազգային քաղաքականությանը և Ղարաբաղյան հակամարտության համատեքստում նրա ունեցած ազդեցությունների բացահայտմանը: Սույն ատենախոսության

նորույթներից պետք է արձանագրել այն, որ ղարաբաղյան հակամարտությունը դիտարկվում է սերտ կապի մեջ ռուսական-խորհրդային՝ ըստ ժամանակագրական հաջորդականության, կայսերական քաղաքականության հետ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխանաբար երկու, երկու, չորս, երկու, ենթագլուխներ պարունակող չորս գլուխներից և եզրակացությունից: Այն ունի գրականության ցանկ և հավելված՝ «ՀՍԽՀ-ի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1923-1930-ական թթ» քարտեզը:

Ներածության մեջ ատենախոսը հիմնավորում է թեմայի արդիականությունը, որում մասնավորապես նշվում է, որ չնայած Ղարաբաղյան հակամարտության մասին շատ է գրվել և դեռ կգրվի ամենատարբեր տեսանկյուններից, սակայն թեմայի գիտական նորույթներից է ԽՍՀՄ ազգային քաղաքականության համեմատաբար բազմակողմանի ուսումնասիրությունը և Ղարաբաղյան հակամարտության համատեքստում նրա ունեցած ազդեցությունների բացահայտումը: Կարծում ենք թեման նաև առաջիններից է ազգաբանական հարցադրումների, հակամարտությանը քաղաքական մարդաբանության դիրքերից մոտենալու և վերլուծելու տեսանկյունից: Քննվող թեկնածուական ատենախոսության նպատակն է ներկայացնել խորհրդային ազգային-պետական քաղաքականության այն առանձնահատուկ կողմերն ու տրամաբանությունը, որն իր ազդեցությամբ կերպափոխումների և նոր ձևակերպումների տեղիք տվեց ղարաբաղյան հիմնահարցում: Նպատակն է նաև նկարագրել ռուսական-խորհրդային քաղաքականության ազգային-պետական դրսևորումները, վերլուծել Ռուսական կայսրության քաղաքականությունը Հարավային Կովկասի էթնիկ հանրությունների նկատմամբ, այդ համատեքստում՝ վարչական վերաձևակերպումները, ազգային հարցի ընկալումները մինչխորհրդային շրջանում և գլխավորապես՝ ԽՍՀՄ կազմավորումից հետո կուսակցական-պետական ազգային քաղաքականության հիմնական դրսևորումները, զուգահեռաբար ներկայացնել հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային, ընթացքն ու կերպափոխությունները, Ղարաբաղյան հիմնահարցի, արցախյան շարժման արդի փուլի ազգաբանական քննումը և դրանում խորհրդային ազդեցությունը:

Առաջին գլխում ատենախոսը քննության է առել Արցախյան հիմախնդիրը ազգերի և ազգայնականության մասին տեսական մոտեցումների համատեքստում: Ներկայացնում է «Ազգ» եզրույթի գիտական բացատրությունը, որը խնդրահարույց է գիտական գրականության մեջ: Տալիս է այդ եզրույթի լատինական ծագումը, որոշակի զարգացումները, մինչև 20-րդ դարի պատմական իրադարձությունները: Ուսումնասիրելով այդ եզրույթի քաղաքական, պետական ու էթնիկական մեկնաբանությունները տրվել է պայմանական տիպաբանումը, ի թիվս այս ամենի՝ «ազգ» եզրույթը օգտագործվում է քաղաքական-էտատիկ իմաստով և հանգում է գիտության մեջ երկու կարևոր տեսությունների խնդրին՝ պրիմորդիալիզմ և կոնստրուկտիվիզմ: Ներկայացված է մարդաբանության մեջ միջէթնիկ հարաբերությունների երկու մակարդակ ա/ուղղահայաց, բ/հորիզոնական: Հեղինակը մանրամասն վերլուծել է Ազգային-պետական քաղաքականությունը, որն իրենից ներկայացնում է պետության կողմից միջոցառումների համակարգ, որն ուղղված է ազգային շահերի հաշվառմանը, համադրությանը և իրականացմանը, ազգային հարաբերություններում առկա խնդիրների լուծմանը: Հանգել է հետևյալ եզրակացության, որ Ռուսական կայսրությունում ինտեգրացիոն քաղաքականությունը գնահատելիս ընդհանուր առմամբ արդիականացումը ստեղծել է լուրջ նախադրյալներ ազգային շարժումների նոր վերելքի համար:

Երկրորդ գլխում քննության են ենթարկվել ցարիզմի քաղաքականությունը և ազգային ընկալումները մինչև 1917թ: Ուշադրություն է դարձվել Արևելյան Հայաստանում վարչական բաժանումներին և հայ-թյուրքական /կովկասյան թաթարական հարաբերություններին 19-րդ դարում և 20-րդ դարի 1-ին տասնամյակին, ինչպես նաև Ազգային հարցի վերաբերյալ Ռուսաստանյան և բոլշևիկյան ընկալումներին: Հեղինակը կարևոր հետևության է հանգում կապված բոլշևիզմի երկդիմի քաղաքականության հետ, ով ոտնահարում էր ցանկացած էթնիկ հանրության ազգային իրավունքները ու շահերը՝ չխորշելով որևէ միջոցից:

Երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է ԽՍՀՄ ազգային քաղաքականության հիմական դրույթները: Մարդաբանական առումով խորհրդային ազգային քաղաքականությունը դիտարկել է ըստ բաղադրիչների՝

ա/Տարածք, որտեղ ինչ վերաբերում է Այսրկովկասին միշտ չէ, որ կիրառվել է էթնիկական սկզբունքը, օրինակ Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորհրդային Ադրբեջանին: Սակայն Ռուսաստանի համար ընկալելի էր ադրբեջանական հայեցակարգը՝ տարածքի տնտեսական նպատակահարմարության սկզբունքի հիման վրա, որը դեր խաղաց 1921թ Կովբյուրոյի որոշման գործում, 2-րդ բաղադրիչը՝ բ/կորենիզացիա (ազգային լեզու, ազգային տարածք, ազգային էլիտաներ, ազգային մշակույթի կազմավորում): Հեղինակը կարևորել է ԼՂԻՄ կազմավորումը և սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացումը, որտեղ Այսրկովկասի խորհրդայնացումից հետո կային չլուծված հարցեր՝ դրանցից էին սահմանազատման, տարածքային հարցերը և այլն: Այստեղ տեսնում ենք Լեռնային Ղարաբաղի հարցում պատմական անարդար որոշումը կայացվել է գերակայելով տնտեսական գործոնը մնացած բոլոր գործոններից: Լեռնային Ղարաբաղը իր կազմի մեջ ընդգրկելուց հետո Ադրբեջանը վարել է խտրական քաղաքականություն, որը հանգեցրեց մեծ հաշվով յուրային-օտարի հակադրությանը կողք-կողքի ապրող էթնիկ հանրությունների շրջանում, որն առավել սրվում էր կոնֆլիկտային իրավիճակներում: Խորհրդային հասարակարգում միջէթնիկ հարաբերությունները կաղապարվում էին եղբայրության, բարեկամության գաղափարական կարգախոսներով: Համակողմանի նյութի ուսումնասիրությունը հանգում է նաև էթնոքաղաքական ինքնության փնտրտուքներին Ադրբեջանում, որը բաժանվում էր 3 մասի՝ աղվանական, ատրպատականյան և թյուրքական իրենց մտացածին մեկնաբանություններով:Նյութի մեջ մանրամասն ներկայացված են տեսակետները

Չորրորդ գլխում հեղինակը քննության է առել Արցախյան հակամարտությունը արդի կոնֆլիկտի մարդաբանության համատեքստում և արցախյան խնդիրը արդի աշխարաքաղաքական զարգացումներում: Պարզ երևում է, որ Ադրբեջանը վարել է նպատակաուղղված քաղաքականություն՝ Լեռնային Ղարաբաղի հայության դուրսմղման և տարածքը յուրացնելու ուղղությամբ՝ միևնույն ժամանակ ադրբեջանական ինքնության հիմնասյուներից մեկը դարձնելով հակահայկականությունը:

Ատենախոսությունն ավարտվում է ամփոփիչ եզրակացությամբ, որում մեկնաբանվում է ԽՍՀՄ ազգային քաղաքականության և Ղարաբաղյան հակամարտության ազգաբանական ուսումնասիրության արդի տեսակետները:

Թեկնածուական ատենախոսությունը գրված է գրական հայերենով՝ պահպանելով լեզվի գիտական ոճը: Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը ծանոթ է և օգտագործել է հետազոտվող խնդրին վերաբերվող օտարալեզու հիմնական գրականությանը:

Գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և արդյունավետ աշխատանքը՝ կցանկանայինք նրա ուշադրությունը հրավիրել մի քանի հարցերի վրա.

1. Հեղինակն «Օղակ» օպերացիայի աշխարհագրական շրջանակները սահմանափակել է Շահումյանի ու Խանլարի շրջաններով (էջ 161), մինչդեռ, գուցե կարելի էր այն ընդգրկել է նաև ԼՂԻՄ Հադրութի և Շուշիի շրջանների գյուղերը, իսկ ավելի ուշ՝ Մարտակերտի շրջանի որոշ գյուղեր:

2. Աշխատանքում զուգահեռ հանդիպում է և Այսրկովկաս և Հարավային Կովկաս տերմինների գործածումը: Կարծում ենք պետք է բերել նույնականացման:

3. Հետագայում հետազոտությունը շարունակելու և հատկապես մենագրության պատրաստելու դեպքում արժեքավոր կլինի ներառել այլ արխիվային հավաքածուներ ևս: Մասնավորաբար՝ հեղինակի ուշադրությունը կուզենայինք հրավիրել նաև թանգարանային նյութի ուսումնասիրության վրա՝ ներկայացնել նաև ՀՊԹ-ում պահվող Ադոյի /Հովհաննես Տեր Մարտիրոսյանի/ արխիվից, ով մանրազննին ուսումնասիրություններ է կատարել և հրապարակել վիճակագրական տեղեկություններ Կովկասյան ժողովուրդների մասին ըստ «Кавказский календарь»-ի, ուսումնասիրել ՀԿԿ առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի արխիվը, հատկապես մտավորականների նամակները, առաջարկները նաև

սահմանազատման հարցերը, որն արտահայտվեց «Ազգային զարթոնք»-ի ժամանակահատվածում:

Նշված դիտարկումներն ամենևին չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը:

Ատենախոսության սեղմագիրն արտահայտում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, որում տեղ գտած դրույթներն ու թեզերը հրատարակվել են աշխատության մեջ:

Հայաստանի պատմության թանգարանը գտնում է, որ Արտակ Սուրիկի Խաչատրյանի «ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը և դարաբաղյան հակամարտությունը. ազգաբանական ուսումնասիրություն» վերնագրով ատենախոսական աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած գիտական աստիճանին: Այս աշխատությունը ցանկալի է տեսնել հրատարակված:

Ազգագրության բաժնի վարիչ՝ Ա.Ասատրյան

Նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ՝ Ս. Գալստյան

Գիտական գծով փոխտնօրեն՝ Ն. Երանյան